



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՊԱՐԽԻ

ԱՐԺԱՅԱԳԱՅԱՆՈՒԹՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 118

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՄ
ՔՆՍԿԷ
ՏՈՒՐՈՒ
ԿԵՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսաւան-
ւան տար. Ֆր. 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՅԷ. — Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց. 5, 4.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրով թիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահազդհներ, եւն., եւն.: Դիւները անմեղեցիկ կերպով աժան են:
Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂՈՍԷԱՐԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ՝ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 25 Հոկտեմբեր 1913 Թիւ 118

«Սրբազան Բաժնաւայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առձազանց շաքաթաբերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաքաթաբերքը, ինչպէս նաեւ ամոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարդ. Մերի տէլ Վալի, առ Ամեն. Ս. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեման, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶԻՌՆԻՔՆԵՐ

ԵՐԼՈՒ ԿԱԹՈՂՈՍԷՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս կ'ըլլայ...

Այնպէս՝ ինչպէս որ կ'ըլլան երկու կրօնք, երկու քրիստոնէութիւն, որոնցմէ մին անշուշտ սխալ է: Բրիստոնէութիւն և ոչ-քրիստոնէութիւն. ահա երկու կրօնք, որոնց երկրորդը, ո՛րչափ ալ ճիւղաւորուած ըլլայ այլ եւայլ անդանց ներքեւ, Պրահմայ, Պուտտայ ևն., տրամաբանօրէն սխալ է և մոլորութիւն է: Կաթողիկէութիւն և ոչ-Կաթողիկէութիւն. ահա՛ երկու քրիստոնէութիւն, որոնց երկրորդը, ինչ անուն որ կրէ՝ արեւելեան եկեղեցի, Բողոքականութիւն, ևն., Աւետարանի ոյժովն իսկ կը դատապարտուի ստորութեան ու մոլորութեան:

Ահա՛ այսպէս կայ նաև երկու Կաթողիկէութիւն:

Ի՞նչ է փիլիսոփայական պատճառը այս երկուութեան:

Մարդկային միտքն է. որ նախաստեղծ մարդուն ամբարտաւան անհնազանդութեան յանցանքով իր վերջին վախճանէն քեցուելով, կորսնցուց ճշմարտութիւնը, որ լոյս է, Լոյսն նւարիս որ լուսաւոր առնէ զամեցայն մարդ. և մարդկային միտքը, որ բնութեամբ Աստուծոյ նման ստեղծուած է, միւրընդեմ խաւարի, այս է՝ մահաբեր մոլորութեան մէջ. Նսե՛աք ի խաւարի եւ ի ստուերս մահու: Թէեւ Բրիստոս Փրկիչն ազատեց մարդկութիւնը խաւարին իշխանութենէն, սակայն մարդուս ինքնիշխան ազատութիւնը չի ջնջեց, որով շատ մարդիկ Սրբեցին զխաւար առաւել քան զլոյս: Հետեւաբար այս երկուութեան պատճառը մարդուս ամբար-

տաւանութիւնն է, որ կը կուրցնէ մտաց աչքերը, կը քարացնէ սիրտը և կը խարխափեցնէ խաւարի մէջ. երբ կը հնազանդի մարդըս Աստուծոյ յայտնութեան և իշխանութեան և հեղինակութեան, ունի լոյսն ու ճշմարտութիւնը. իսկ երբ ուղէ քննել, դատել, պատգամել, և ըմբոստանայ, չի հնազանդի, ահա՛ կը պատէ զինքը խաւարն, ու թըշուառաբար կը թաւալի մոլորութեան մէջ:

Իսկ միեւնոյն ճշմարտութեան, Կաթողիկէութեան ծոցին մէջ իսկ ինչպէս կրնայ տիրել այս երկուութիւնը, այս դժբախտ խաւարը: Այնպէս՝ ինչպէս Քրիստոսի աշակերտաց մէջ իսկ շարունակ կար Յուդա մը. ինչպէս առաջին ձեռնադրուող եօթը սարկաւազներէն մին իսկ հերետիկոսացեալ եղաւ. ասոնք եւ իրենց նմանները՝ ազատ միտքեր էին, Հայրաք, ամբարտաւանք, յանդգունք, որք հակառակ կան հեմարտութեան, մարդք ապականեալք մօտ, անպիտանք ի հաւատս (Բ. Տիմ. Գ.): Ասոնք ինքնահաւան քննադատներ են, վճռատու են. ասոնք իբրեւ թէ փրկափայ, ինքնագիտակից Կաթողիկէներ են. ասոնք դատաւորներն են բանին Աստուծոյ և Նուիրապետ Իշխանին՝ Յաջորդին Ս. Պետրոսի. ասոնք թէ՛ ըստ պատշաճութեան և թէ՛ երբեմն նոյն իսկ ըստ էութեան՝ առնելեաց մասին դաս կու տան Քահանայապետին. իրենք են անսխալ և ո՛չ Քահանայապետը, ո՛չ թէ իրենք Անոր, այլ Նա իրենց պէտք է հնազանդի: Ասոնք ուրեմն են այն մոյի որովք զոր թշնամին զաղտագողի ցանեց Քրիստոսի արտին ցորեանին մէջ (Մատթ. ԺԳ): Մինչև իսկ իր ծառաներն ապշեցան ու ըսին. «Ո՛վ Տէր, մի՛թէ բարի հունց չի սերմանեցի՞ր քու ազարակիդ մէջ. հապա ուսկի՞ց է անոր մէջ այդ որովք»: Եւ երբ եռանդուն ծառաները կ'ուզէին կորզել այդ որովքները, հրաման չտուաւ Տէրը և ըսաւ. «Թո՛ղ տե՛ք որ անին ի միասին մինչեւ հունձի ժամանակ», ա՛ն ատեն պիտի զատուին և այրուին որովքներն անշէջ կրակի մէջ:

Քրիստոս՝ ամբողջական Կաթողիկէութիւն կը պահանջէ. Ուսուցե՛ք զամենայն որ

ինչ պատուիրեցի ձեզ. իսկ ասոնք իրենց մտաց ծնունդը, մասնաւոր Կաթողիկէութիւն կը քարոզեն: Այս ամբարտաւան Կաթողիկէները ըստ ժամանակին ալիւլալ մակդիրներով որակուած են. Ազատական Կամ Ազատական (Libéral) ըսուեցան, մանաւանդ Գաղղիոյ, Գերմանիոյ և Ամերիկայի մէջ. կոչուեցան նաև Պատեհապաշտք (Opportunistes). Սիլլոնականք (Sillonistes) ևն., և ինչպէս որ Լուտերին և իրեններուն ազատամտութենէն՝ բողոքականութիւնը ծնաւ, այսպէս ալ ազատամիտ Կաթողիկէութենէն ահաւոր վիժած մը լոյս տեսաւ և լանուն առաւ՝ Արդիականութիւն (Modernisme), զուր ամենայն մոլորութեանց և ապականութեանց: Երկու դրօշներու խնդիրն է, Քրիստոսի և սատանայի: Մեծն Պօսիւէ սատանան կը նմանցնէ մուխի, որ կը մտնէ ամէն ծակտիքի մէջ. այսպէս դժոխային ամբարտաւանութեան դաւակ եղող այդ ազատամիտ արդիականութիւնը տակաւ թափանցած էր Կաթողիկէութեան ամէն խաւերուն մէջ՝ անհասանելի կեղծիքով. մինչև որ մերկացուցուեցաւ ու շանթահարեցաւ Եկեղեցւոյ անսխալ Գլուխէն:

Ինչո՞ւ թոյլ կու տայ Աստուած այս դժբախտ երկուութեան, նոյն իսկ ճշմարտութեան ծոցին մէջ: Ես ի՞նչ գիտեմ. պիտի հաւատամ սակայն իր անսուտ խօսքին: Ըսաւ. «Ահա սա կայ ի գլորումն եւ ի կանգնումն բազմաց» (Ղուկ. Բ.): Ըսաւ. «Հոս անոյժ եմք Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ կորուսելոցն. ոմանց հոս մահուանէ ի մահ, եւ ոմանց հոս կենդանութենէ ի կեանս (Բ. Կոր. Գ.):»

Անիծեալ ամբարտաւանութիւնն է որ զմարդ կը մոլորեցնէ. սուտ իմաստութիւն: Պօղոս առաքեալ կ'ըսէր թէ Միսքր գերի կ'ընենք՝ Քրիստոսի հնազանդելու համար. եւ հաւատացեալները կը խրատէր. «Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան» (ա. Կոր. Բ.), որովհետեւ՝ «Ոչ ծանեալ աշխարհ իմաստութեամբն զԱստուած» (Անդ. Ա.): Գե'րի ընել միտքը, կամովին հապալ ըլլալ Քրիստոսի, յօժարակամ և անպայման հնա

զանդ ըլլալ իրեն և իր Փոխանորդին որ միակ անսխալ Վարդապետ է, ահա՛ ճշմարիտ ազատութիւնը Կաթողիկէին: «Որ ձեզ լսէ, ինձ լսէ»: Ո՛չ ոք կրնայ յապաւել կամ աւելցնել ուղղափառ վարդապետութեան վրայ և ոչ իսկ Յօրա մը:

Մեր մէջ ալ ի սկզբանէ անտի կը տիրէ այս ցաւայի երկուութիւնը. երկու Կաթողիկէութիւն: Առաջինը՝ ճշմարիտ և անպայման. երկրորդը՝ սուտանուն և պայմանաւոր: Առաջինը՝ կատարելապէս հնազանդ Քրիստոսի Փոխանորդին, երկրորդը պայմանաւոր. ինքն դատող, ինքն վճռատու, ինքն ուսուցանող, Վերջապէս՝ առաջինը ամբողջական կաթողիկէութիւն, իսկ երկրորդը՝ մասնակի:

Ի՞նչ անուն ունի մեր մէջ այս երկրորդ և անհարազատ կաթողիկէութիւնը: Թէեւ անուն ունենալու չափ փրկստփայական չէ, սակայն և այնպէս կամէութիւն ունի կոչուելու ազգայնական, անոր համար որ կը կարծէ թէ ազգին իրաւունքները, լեզուն, փառքը, ապագան ինքն կ'երաշխաւորէ: Այս գաղափարի հետեւողներէն շատերը սակայն կ'անգիտանան խնդրոյն էութիւնը: Իսկ համոզումներու արժէքին ու բարոյականութեան մասին պէտք է Քրիստոսի Տեառն մեր հրամայած չափանիշը, կրիսքիոսը գործածել. «Անոնց պսուղներէն ճանչցե՛ք զիրենց»:

Պէտք է սակայն դիտնալ թէ Քրիստոսի ճշմարիտ հաւատացելոյն երբեք թոյլ տրուած չէ՝ հաւատքը զոհել ազգին: Կրօնքը գերադաս է ազգին. ազգ՝ աշխարհի քաղաքացիութիւն է, իսկ կրօնք՝ երկնից. ազգ՝ անցաւոր է, իսկ կրօնք՝ յաւիտենական: Ի Քրիստոս ընդհանուր եղբայրակցութիւն է. ճշմարիտ կրօնի մէջ, Չիք խտր. Կրօնք՝ զի յԱստուծոյ է բխած և պաշտօն է Աստուծոյ, բնութեամբ յառաջագոյն է ազգէն, որ միջոց մըն է միայն՝ անչլութեամբ առ վերջին Վախճանն: Դարձեալ, սուտ է թէ Կաթողիկէ կրօնքը, իր ամբողջականութեամբ, վնասակար ըլլայ ազգին պահպանումին: Փրկստփայի մը համար արհամարհելի չաղակրապետութիւն մըն է այն առարկութիւնը թէ

Կաթողիկէայք չին պահեր լեզուն. եթէ ուրիշ լեզու խօսելու վրայ է հարցը, միեւնոյն բանը կը ստուգուի նաեւ էջմիածնականաց վրայ, առաւելագոյն համեմատութեամբ, այն գաւառներուն մէջ ուր Հայը բռնի մոռցած է իր լեզուն. իսկ եթէ գաղղիէրէն խօսելու կամ ազգութիւնը ծածկելու զեվկեկութեան վրայ է խնդիրը, միեւնոյն ստորնութիւնը կը ստուգուի նաեւ էջմիածնականաց վրայ, անհամեմատ առաւելութեամբ. ինչպէս իրենց թերթերն իսկ կը վկայեն: Եթէ գաղղիէնէրու տակաւ հալելուն վրայ է խօսքը, ճիշդ նոյն բանն է էջմ. գաղղիէներու համար ալ: Ասոնք սակայն պատահական բաներ են: Իսկ ազգին թէ՛ լեզուն, թէ՛ մատենագրութեան, թէ՛ գոյութեան պահպանումին սկզբնաբար ծառայած է Կաթողիկէութիւնը, առանց որոյ դեռ խոր տգիտութեան մէջ թաղուած պիտի ըլլար ազգը: Երանի՛ թէ ազգը ամբողջովին Կաթողիկէ եղած ըլլար: Իսկ հիմա կրօնքն ու ազգը ի միասին ջնջելու համար ոգի ի բռին կ'աշխատին էջմիածնականք. պօռոտախօսութիւնը արժէք չունի, իրաց տրամաբանական արդիւնքը պէտք է զննել: Էջմ. Եկեղեցականութիւնը, տգէտ կամ անտարրեր կամ անկրօն, որ աւուր կը ջնջէ կրօնքը. և առանց կրօնքի, անհնարին է պահպանել Հայ ազգին գոյութիւնը. վկայ են տասնուվեց դարեր: Վարդանանք կրօնքի համար կռուեցան և կրցան ազգէն փրկել ինչ որ փրկեցին: Իրենց մէջ չահատակող անտարբերներն, ընկերվարականներ, անկրօններ, որ օրըստօրէ կը տիրեն վարչութեան, ազգին կորստեան ցեցերն են:

«Անոնց պսուղներէն ճանչցե՛ք զիրենց»:
Ազգասիրութեան պատրուակին տակ կ'ուզուի ազատական անխտրականութիւն, վերցնելու համար ամէն անհամաձայնութիւն: Ասոնք կը նմանին արդի ընկերաբաններուն, որոնք ամուսնական կոիւններ ջնջելու համար կ'ուզեն ջնջել ամուսնութիւնը: Ասոնք ալ կ'ուզեն ամէնուն բարեկամ ըլլալ. մէկուն սիրտը չկոտրել, ճշմարտութիւնը խոստովանելով՝ զոր Քրիստոս հրամայեց. էջմիածնականին չըսել՝ թէ մոլորեալ է և իր եկեղե-

ցին հերձուածող և հերետիկոս է. ինչո՞ւ պաղեցնել... ինչո՞ւ եղբայրատեաց երեւնալ... Ի՞նչ փառաւոր ընթացք: Կաթողիկէ մը, որ կ'ամէնայ՝ Գրիստոսի հաւատքին մէջ, որ կը վախնայ՝ մարդկային ակնածանքի զոհ, կը դաւէ իր ընկերին փրկութեան՝ հարկաւոր զեկոյցը չընելով երբ պէտք ըլլայ, այլ աւելի հաստատելով զայն իր մոլորութեան մէջ. նա մանաւանդ ինքն ալ գայթակղելով. որովհետեւ այս վարմունքին վախճանը կը յանդի կաթողիկէին իսկ անխտրականութեան, որով վարակուած կը տեսնենք այսօր այնչափ խեղճ կաթողիկէներ, անգործադրող իրենց կրօնքին, անխտրական ուրիշներու հետ, անտարբեր իրենց կարծեաց մէջ:

Բայց, ազգասիրութիւնը... կ'ըսեն Ո՛հ, ոսկեզօծիկ բառ, առաձգական բառ, կեղծիքի համար դարբնուած բառ, ո՛րքան ազգատեցութիւն կը բովանդակես, զքեզ յոխորտայիր աղաղակողներէն չատերուն սրտին մէջ: Ազգասիրութեան սխալ իմացուած պատրուակին տակ ի սկզբանէ անտի կաթողիկէութեան հիմնական պահանջներուն մէջ թերացող կաթողիկէները կը մասնունին իրենց իսկ գործերով: Ասոնք զճշմարիտ և ամբողջական կաթողիկէները կ'անուանեն անդրալեռնական, մոլեռանդ, ծրուած: Յանրաւի կ'ամբաստանեն գանոնք իբր լաթի-նացնողներ. մինչդեռ այդ անկարելի է ամէն տեսակէտով. բացարձակ զրպարտութիւն, մոացածին կամ զիտումնաւոր: Ասոնք կը կարծեն թէ ազգասիրութիւնը կը կայանայ կաթողիկէութեան դաւելու մէջ. անոր անբաժանութիւնը, ամբողջութիւնը խանգարելու մէջ: Ամբողջական կաթողիկէայք իրենցմէ շատ աւելի սերտիւ եւ աւելի զրականապէս կը սիրեն իրենց ազգը. անոր կրօնական, բարոյական եւ նիւթական երջանկութեան կ'աշխատին կարելիութեան սահմանին մէջ, եւ միշտ այսպէս աշխատած են. բայց ոմանց պէս ընդունայնախօս ու մեծաբան չեն: Այսու հանդերձ, ազգային տեսակէտներու, կամ լաւ եւս՝ նիւթական շահերու համար կեղծաւորաբար ազգը չեն նախադասեր

կրօնքի. նախ կրօնք եւ ապա ազգ, նախ Աստուած ապա մարդ. նախ յաւիտենականը ապա ժամանակաւորը:

«Անոնց պտուղներէն ճանչցե՛ք զիրենց»: Այս ազատական կաթողիկէայքն են որ առդիական եղած են՝ անունը չգիտնալով: Հաւատոյ մասերէն զոմանս կը քննադատեն. զոմանս կը մերժեն. զ. օ. Վատիկանու Ս, Ժողովը, Քահանայապետին ուղղակի իշխանութիւնը մէն մի վիճակի եւ մէն մի անհատի վրայ. բանադրանքը միջնադարեան անգոր զէնք մը կ'անուանեն ու կը քամահրեն. եկեղեցական պետերը, արարողութիւնները, Ժողովրդապետական անուանումները կը յանդգնին հակակշիռի ենթարկելով, տիրել, առխառնականացում գործադրել: Անխտրականութիւն եւ անտարբերութիւն կը քարոզեն: Ասոնք սկզբունքի չար պտուղներ են: Գործով ալ այս յոռի վարդապետութիւնները կ'ապացուցանեն: Կ'անարգեն Ս. Քահանայապետէն արձակուած բանադրանքը, եւ անպայման կը յարատեւեն մնալ անոր մէջ՝ սուրբ Խորհուրդներէն հեռու եւ դատաւարտութենէ աներկիւղ, կը հայոյն, կը զրպարտեն, կ'անուանարկեն եկեղեցական պետերը, աշխարհական բազուկի կը մատնեն զանոնք. կը հայոյն Ս. Սիրտը, Յիսուսի անարատ կեանքը, ջերմութեամբ թիւնները. կը սրբապղծեն եկեղեցիները, պատկերները, Սեղանին Ս. Խորհուրդը. կը ճգնին գայթակղեցնել Ժողովուրդը, ազգին մատուցաւորները, անլուր հրատարակութիւններով, անկրօն տնօրէններով եւ ուսուցմամբ: Կը գատեն զՍ. Քահանայապետը, անոր ճամբայ ցոյց կու տան, կ'արհամարհին զայն: Միանգամայն հատարակութեան ամէնէն հինաւորը, էական, գոյացական, կենսական իրաւունքներուն մատնիչ, քրքրիչ, քանդիչ կը հանդիսանան:

Տխուր օրինակ մը միայն կը բաւէ. Բարսեղ Ս. Բարսեղեան ոմն, որ Կաթողիկէ անունն ունի եւ չէ, որուն Մեմփուա կոչուած անխիղճ ու ամէն աշխարհակութեանց յուսահատ ընդունարանն եղող թերթին մէջ զրաժներն արդէն նախատինք մըն են կա-

թողիկէութեան, կարծես Կաթողիկէ անունն աղարտել եւ նշաւակել կ'ուզէ նաեւ հերձուածողաց հրապարակին վրայ, եւ Օրմանեանի վերջին ծանօթ միջադէպին առթիւ էջմ. Թերթի մը մէջ (Հեռաձայն, թիւ 80-1585) յօդուած կը հրատարակէ, որուն բովանդակութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ Կաթողիկէութեան ուրացումը: Թէեւ բնաւ չ'արժեր, բայց մեր առաջարկը հաստատելու եւ իրենց՝ Գ. Մալխասի եւ այլոց նման փառապանծ մէկ ախոյեանին մէջ մեր ըմբոսանքուն խփութիւնը ցուցադրելու համար, այս յօդուածին համառօտ ամփոփումը ընենք:

Ինքնակոչ յօդուածագիրը որ անուր եւ իրբ յանդգնութեամբ ինքզինքը կը ներկայացնէ իբր խօսող յանուն ամեն Հայ Կաթողիկէներու, առաջին յարձակումով բացարձակապէս կը դատապարտէ Գերջ. Հ. Գաբրիէլի պորտաճանաչ գործը. վասն զի կ'ըսէ թէ՝ այդ ձեռնարկը «տխուր ու անիմաստ մտածում մըն է այնպիսի դարու մը մէջ՝ ուր ամէն մարդ ազատ է իր անձնական գաղափարներուն յենլով շարժիլ, իր սկզբունքներուն համաձայն խորհիլ»: — Ահա ձեզի փառաւոր չկաթողիկէ մը: Կո դատաւիտէ վիեննական Միթիթարեանները՝ «կրօնափոխութեան դործերու միջամուխ ըլլալուն» համար, մինչդեռ պէտք է «աշխատին իրենց յառաջադիմութեան ու պանծացմանը», առոտն կոխելով իրենց կոչումը, պարտքը, իրենց եւ այլոց յաւիտեանական փրկութիւնը, զորս կը կոչէ «ծխած նպատակներ»: Հ. Գաբրիէլի այս գործը «աղարտեց, կ'ըսէ ամբողջ Միաբանութեան մը անունը»: — Ո՛հ, այդպիսի յօդուածագիրներ կաթողիկէութեան անունը կ'աղարտեն: Էջմիածնականները կ'ուզեն որ Միթիթարեանք՝ Վիեննայի եւ Վենետիկոյ, բացարձակապէս լռեն կրօնքի մասին, իրենց մոլորութիւնները չըսեն. Աւետարանի եւ Եկեղեցւոյ չձառայեն. ազգայնական դեր միայն կատարեն եւ դրժեն իրենց կոչումին ու կաթողիկէ կրօնին դրած պարտականութեանց. այս թէութեամբ միայն կը սիրեն զանոնք, ինչպէս օձ ի ծոցի, հազիւ շար-

ժում մը, եւ ահա կը խայթեն: Մեր անխառնական Կաթողիկէայք ալ, որոնք բնաւ տարբերութիւն չունին Էջմիածնականներէն, նոյնը կը պահանջեն Միթիթարեաններէն, չնայելու համար իրենց սէրը: Ասոր համար է որ այս յօդուածագիրը չամչնալով կ'ըսէ թէ՝ Վիեննայի Միթիթ. Միաբանութիւնը «ի՞նչ կը շահի երբ կաթողիկէներու թիւը կը լազմապատկուի»: Պանծացումը, շահը միայն պէտք է եզեր նկատել! մինչդեռ Բրիտոս ըսաւ. «Ոչ կարեք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի»: — Դեռ կը յանդգնի աւելի անձուռնի մոլորութիւններ շարել. «Եթէ ինք որպէս կրօնաւոր, որպէս կաթողիկ կրօնքի մշակ այդ փորձը ըրած է, կրկին կը սխալի, որովհետեւ (Օրմանեան) կը զգայ իրմէ աւելի կրօնքի ճշմարտութիւնը»: — Ուրեմն կաթողիկէութենէ ուրացող մը՝ կաթողիկէ քահանայէ մը աւելի կը զգայ եղեր կրօնքի ճշմարտութիւնը! Դեռ աւելին կայ. Օրմանեան «ամուր նկարագրի տէր մարդ» մըն է եղեր, «ազատ ու լուսաւոր գաղափարներով խմորուած անձնաւորութիւն մը»: ... — Ո՞վ պիտի կարենայ հաւատալ որ այդ տողերը գրողը եւ իր նմաններն ալ պոնէ մտքով ուրացեալներ չեն: Նա կը հաստատէ զայն. «Օրմանեան արդէն ինք ապրած է քրիստոնեայ եկեղեցւոյ մը մէջ, իր օրերը անցուցած է աղօթքով ու երկիւղածութեամբ», եւ անպատկառ կը յաւելու. «Արդեօք լուսաւորչի կրօնքը (ըստ իրեն՝ Էջմիածնականութիւնը) քրիստոնեայ կրօնք մը չե՞ն ընդունիր ... Իրաւ այդ կէտը զաւեշտական ու տխուր սպաւորութիւն մը կը թողու վրաս»: — Կաթողիկէ՞ մըն է որ ասոնք կը գրէ. յիշաւի տխուր բան ... :

«Ես, կ'ըսէ ծանօթ եմ Հ. Մէնէվիչեանի ազգային ոգւոյն ու լայնչի զգացումներուն. ինք ազգասէր է բառին բուն նշանակութեամբ. ինք այդպէս (իմա՝ այդպիսի) ձեռնարկ մը չպիտի կարենայ ընել» — Ահա ի՞նչպէս կը հասկնան ազգասիրութիւնը, կրօնքը, պարտքը: Յօդուածագիրը կ'ըսէ թէ «Իբրեւ Հայ-Կաթողիկ անհատ՝ այդ խնդիրը կը նկատեմ կրօնական բնագոյն մոլորանք»:

դուժինն մը... ինծի պէս կը խորհին ամբողջ Հայ Կաթողիկոսները»։ Վա՛յ անոնց որ քեզի պէս կը խորհին. բայց բարեբախտաբար այդ մոլար պարբերութիւնդ ալ սուտ մըն է բացարձակ, ինչպէս նաեւ սուտ կը խօսիս երբ կ'ըսես. «Մենք կը յարգենք մեր ազգային եղբարց եկեղեցիներն ալ, ըլլա՛յ Լուսաւորչական կամ Բողոքական»։ — Կը յարգենք ու կը սիրենք մեր ազգային եղբայրները՝ անհատաբար, այո՛, բայց այս սէրը ինչ օգուտ ունի գաղափարներու համար, եթէ անոնք շարունակեն իրենց մոլորութեան մէջ. ան ատեն այդ սէրը մեզի պիտի վնասէ. եթէ շարունակենք անխոհեմաբար՝ մենք պիտի տուժենք. և տակաւ պիտի ըլլանք անխելտորոզ, ինչպէս եղած է յօդուածագիրը. որ կը յարգէ եղբր անոնց եկեղեցիները, այսինքն կրօնքը, այսինքն մոլորութիւնը, Այդ անկարգ սէրը պիտի վնասէ նաեւ անոնց, որ պիտի խրախուսուին յարատեւելու ինչպէս որ են։ Ամէնէն մեծ սէրը՝ ճշմարտութիւնը ամբողջովին ըսելն է, անարատ և մերկապարանոց։ Արդ մենք չենք կրնար քնաւ յարգել անոնց եկեղեցիները, զի եկեղեցին մէկ հատ է ինչպէս ճշմարտութիւն, հաւատք, Քրիստոս և Աստուած. անկէ դուրս ամէն համախմբում մոլորութիւն եւեթ է։ Այսպիսի ըմբռնումներով է որ այդ դժբախտ կաթողիկէն կամ լաւ եւս ոչ-կաթողիկէն կ'աւարտէ իր յօդուածն ըսելով. «ազգին յառաջագիծութենէն դուրս ո՛չ մէկ էութիւն չկայ մեզ նուիրական ու պաշտելի»։

Այսպիսիներուն համար պէտք է աղօթել Քրիստոսի Տեառն մերոյ հետ, Հայր, Թո՛ղ դուրս, որովհետեւ չեն գիտեր ինչ կ'ըսեն ու կը գրեն ու կը գործեն։

Ահա ազատական կամ ազգայնական կաթողիկէութիւն, որ ահագին կործանումներու կ'առաջնորդէ։

Ո՛չ այսպէս. Քրիստոս եւ իր Փոխանորդը ճշմարիտ Կաթողիկէններ միայն կը ճանչնան, ամբողջական Կաթողիկէնները, որոնք Կաթողիկէայ են, առանց ու եւ վերապահութեան, անպայման հնազանդ, որդիաբար յարկադիր։ Պէտք է խիստ ըստեղծութիւն

(discipline) ինչպէս բանակի մը մէջ. զի կրօնքի մէջ ալ երբ իշխանութիւնը անպայման չյարգուի, պարտութիւնն ու փճացումը առ դուրս կայ սպառնալից։ Ամէն գնով պէտք է յարգուի իշխանութիւնը, որ արդէն Աստուծոյ կը փոխանորդէ եւ զԱնի կը ներկայացնէ իրօք։ Առանց հակառակութեան, առանց յամառութեան, առանց յոխորտանաց հնազանդիլ իշխանութեան, ահա՛ ամբողջական եւ միակ կաթողիկէութիւն։ Դեռ անցեալ օր Գաղղիացի ծիրանաւոր մը՝ կաթողիկէութեան այս իմաստով ամբողջականութիւնը քաջաբար պաշտպանող անձնաւորութեան մը կը գրէր. «Այսօրուան օրս Եկեղեցին աւելի քիչ կը չարչարուի ամբարիշտներու յարձակումէն, քան թէ իր զաւակներուն վարդապետական տկարութիւններէն, եւ կաթողիկէ բանակին մէջ արդիականութեան եւ ազատամտութեան սողոսկումներէն։ Ազատական շլացումն ու պատրանքը եւ գործելակերպը՝ կաթողիկէ ոյժերու հաւաքական միութեան խափանարար են։ Առ Ս. Քահանայապետն հնազանդութիւնը քրիստոնէից պարտականութեանց առաջին կարգին վրայ դասողներէն ո՞ր մէկը պիտի պախարակէ զձեզ որ կաթողիկէութեան ամբողջականութիւնը կը պաշտպանէք։ Կ'այսպանուի՞ արդեօք զօրական մը՝ իր զօրապետին, որդի մը՝ իր հօրը հնազանդելուն համար»։

Ահա այս է որուն համար կը պայքարին այժմ Գերմանիոյ և Գաղղիոյ Կաթողիկէայք. որ անանջատ և խիտ փաղանգ մը կազմեցին գարեթէ ի վեր չտեսնուած կենսունակութեամբ, կորովով, զոհաբեր անձնուրացութեամբ։ Աստուած զուարթառատ տուրքերը կը սիրէ։ Ամբողջ սիրտը կ'ուղէ Աստուած, որ Աստուած նախանձոք է։

ՅԻՍՈՒՆ ՔՐԻՍՏՈՍ (*)

Տ Է Օ Ր Տ Ի Ի Ն Ճ Ի Ի Պ Ա Պ

Յիսուս Քրիստոսըն բեմիկ ազիզիկ, միսքա-
զիկ վե լեւեւիկ բեմիկիկ:

(Շար.)

Պու սօն քէլամար պիզի, Յիսուս Քրիս-
տոսըն սիմաւնտա, պէլքի հէքսինտէն կիւ-
զէլ օլան հէնի պիր խաթթըն թէտզըզընա
սէլիգ էտէլէր Կանի կիւնան վէ մուրտար-
լըզլա տօլու օլան պիր խալգ արասընտա
հաշատըզը վազըթ, օնուն իւզէրինտէ բար-
լայան թէքմիլ պիր ազիզիկ վէ լեքէսիկ
պիր թիքմիլիք կիւզէլլիյինտէն պահա էթ-
մէք տիր միւրատըմ, օնուն ֆիքրինի, գալ-
պինի, իրատէթինի, ֆիլիլէրինի զաթէն
թէտզըզ էյլէտիք, շիմտի պիր ատըմ տահա
աթալըմ, օնուն վիճտանըն սէյրու թէմաշա
էտէլիմ:

Բասքալ պուհա նազար գըլտը վէ պիր
նէվ կէօզ գամաշմաւնա թուլթուլտը վէ հէյե-
ճանա կէլմիշ օլան էլի, սուրէթա մանաւըզ
օլտուզը հալտէ զայէթ տէրին պիր մանա իւ-
թիվա էտէն շու սէօլլէրի քեաղըտ իւզէրի-
նէ աթտը: «Յիսուս Քրիստոս հալիմ, սա-
պըլը, Ալահըն ինտինտէ ազիզ, ազիզ, ազիզ,
չէյթանլարա տէհչէթէնտազ վէ հէր կիւնան
չաթիպէսինտէն միւնէզգէհ օլմուշ տըր: Ահ,
գալպ կէօզիւլէ նազար էտէլէր վէ իւմ ու
ֆէրասէթի կէօրէնլէր իչուն օ նէ՝ գատար
պէօյիւք պիր տէպուտէպէ վէ նէ՝ կիպի մուազ-
զամ պիր շէվքէթ իլէ կէլմիշ տիր:»

Հազիգաթը հալտէ տախի Յիսուս Քրիս-
տոսըն գուտսիյէթի օնուն էն ալլահանի պիր
կիւզէլլիյինի թէշքիլ էտէր վէ շիմտիյէ գա-
տար կէօրտիւլիմիւզ կիւզէլլիքէր, պու
կիւզէլլիք գարշըսընտա սօլիուն վէ բէնկսիզ
կէօրիւնիւլէր:

Պապաթ պու հէկեանէ օլան գուտսիյէ-
թին, պէնիմ էն զիյատէ նազարը հայրէթիմէ
չարբան ճիհէթի, պիլճիւմէ ֆազիլէթլէրին
օրատա թէզահիւր էլիմէսի, օնլարտան հէր-

պիրինին պիր ահէնկի թամմ իլէ իտէալ տէ-
րէճէսինէ վասըլ օլմասը տէյիլ տիր: Սալըր,
պէն օրատա տահա նազիք վէ տահա ինսա-
նի պիր շէյ արայօրում վէ պուլամայօրում:
Պէնիմ, օնուն իւզէրինտէ արատըզըմ շէյ,
կիւնան աճըսը, պիր վազըթ իշլէնիլմիշ օլան
գուտուրլարըն միւնէսիֆ խաթթընտի, կիւնան
իւզէրինէ հիսս օլունան բիւշմանլըզ նէթի-
ճէսի օլարագ տէօքիւլէն թաթլը կէօզ հաշ-
լարը, արթըզ պիր էյի էօմիւր կէչիւմէք ի-
չուն գօնուլան գալի նիյէթլէր, իշթէ պէ-
նիմ արատըզըմ ինսանի վիճտանըն վէ բու-
հըն պու ալլահանի ճիհէթի տիր: Պէնիմ
կէօրմէք իսթէյիպտէ կէօրէմէտիյիմ պու ճի-
հէթ տիր:

Ղարիպ շէյ, պէն օնուն իւզէրինտէ գուտ-
սիյէթին էն միւրթէֆի թէքէլէրինի պուլու-
հօրըմտա, օնլարըն թէմէլլէրինի պուլամայօ-
րում: Աճէպա պունուն հիքմէթի նէ՝ տիր,
վէ պու սըրըր պանա քիմ թարիֆ էտէճէք
տիր:

Սուրբ Յովհաննէս «քէնտինի կիւնանըզ
ատտ էյլէյէնին էն պէօյիւք պիր զաֆլէթ
իշլինտէ պուլունտուզընը» իլան էտէրտի:
Սուրբ Պօղոս «քէնտի քէնտինի կիւնանքեար-
լարըն պիրինճիսի, իւզէրինտէ հիչ պիր էյլիւք
էսէրի պուլունմայան, կիւնանա սաթըմըշ
պիր ատէմ «թէսմիյէ էտէրտի:» Տը Մէսթըր
«պիր ճանի գալպինին նասըլ օլտուզընը պիւ-
մէմ, նամուսըր ատէմ գալպինի թանըրըմ քի
տէհչէթի տիր», տէր իտի: Սալիմ վիճտան-
լարըն քեաֆֆէսի տէ պէօյլէ սէօյլէրլէր: Պիր
ազիզ թէսալվուր էյլէյին, իսթէրսէնիզ ա-
զիզլէրին էն պէօյիւլիւնիւ ալըն վէ օնուն
տուտազլարը իւզէրինէ «պէն ազիզիմ, պէն-
տէ հիչ պիր կիւնան հօզ տըր» քէլամլարընը
գօյուն: Անինտէ մէվգիլինտէն տիւշէր վէ պու-
նա միւնֆաիլ օլան վիճտան, քէնտինէ գար-
շը չըգար վէ օնուն պաշընտան թաճընը սէլպ
էտէր: Ինսան սայիր բիւյա վէ խիւլեալարը-
նը մէվգիլի իճրայա գօյամատըզը կիպի, ա-
զիզիք խիւլեալարըն տախի գօյամազ. էյիլիք
իտէալը գարշըսընտա աճիզ գալտըզը կիպի,
կիւզէլլիք իտէալը գարշըսընտա տախի ա-
ճիզ գալմասը վէ, մէսէլա նէճիպ գալպինին

(*) Տես թիւ 115 էջ 629

ինքնասարքյա պիր ֆազիլէթ թէվլիտ էյլէ-տիյի միսիլու, պէզ իւզէրինէ, էսէրլէրինին էն նէֆիսինի թէրսիմ էթմէք իսթէտիյի տա-գիգատա, թէէսսիւֆլէր չէքէրէք քէնտի քէնտինէ գարչը միւնֆաիլ պիր հալտէ «խա-յըր պու գարարընա միւլէֆֆազ օլամայաճա-ղըմ» տէյէ պիլմէսի, ծնուն շէրէֆինի թէշքիլ էյլէյէն պիր հալ տըր:

Յագաթ պունուն պէօյլէ օլմասըյա պէ-րապէր, իշթէ պիր իսթիսնա զահիր օլմագ-տա տըր: Պիր ատէմ վար տըր քի պիր կիւն «պէն աղիղիմ, իշինիղտէն քիմ պէնտէ պիր կիւնա պուլապիլիր» տէյէ պիլմիշ տիր: Ին-սանլար արասընտա էն ալչազ կէճիւլլիւսիւ էն թէմիզ վէ էն ֆէրասէթլիսի օլան պիր ատէմ վար տըր քի «պէնիմ աղիղ օլտուղըմ կիպի սիզտէ աղիղ օլուն» տէմիշ տիր: Վէ պու զարիպ թաստիգ, տէֆալարճա թէք-րարլանմը օլտուղը հալտէ, ծնուն ալնըն ինաթա էտէն թաճա հիշ պիր նագըսա կէլ-մէմիշ տիր:

Վէ տէյիլ քի եալընը պիւթիւն էօմրիւ իշինտէ քէնտինին միւսթաղիլէն թէքմիլ օլտուղընը թաստիգ խոսուսընտա պիր տա-գիգալը պիր թէրէտտիւտ պիլէ պուլամա-յաճագընը, իլլա, հէր եէրտէ կիւնաճա գեարչը միւսէլլա պուլունան պու զաթ, պէ-շէրիյէթին բիւլմանըղընա սուսամը օլան, մէյտանըղլարտա, «թէօվպէ էտինիղ, Ալլահա տէճիւնիւզ» նիտալարըյա էօմրիւնիւ կէշի-րէն, քէօրլէրին կէօլլէրինէ տօղունտուղըն-տա, քէօթրիւմլէրին ազալարընա էլ սիւր-տիւյիւնտէ, մահա ծնարըն կիւնալարըյա թէէյիւնէ էտէր կիպի կէօրիւնէն «սէլամիթ-լէ կիսիւնիզ, կիւնահլարընը աթվ օլունմուլ-էրլար... կիսիւնիզ արբըզ պիր սահա կիւնահ իթիմէյիւնիզ» տէյէն զաթ, քէնտինին տէ թէվպէյէ ինթիյաճը օլապիլիր օլտուղընա տաիր էն ճիւզի պիր ֆիքիր, պիր իմարէ է-սէրի պիլէ կէօսթէրմէզտի: Հիշ պիր վագըթ պաղընա վուրմամը տըր, նէ Զէյթուլըզ պաղչէսինտէ վէ նէ տէ Գողգոթատա պիր տամլա պիլէ նէտամէթ կէօղ եալարը տէք-մէմիշտիր, քէնտի ֆիքիրլէրինտէն պիրի, քէնտի ֆիրլլէրինտէն հիշ պիրի իւզէրինէ

բիւլմանըզ էսէրի կէօսթէրմէմիշ տիր: Շա-յիրտլէրինէ թէնպիհ էտէր քի «տուայա տուրտուղընըզ վագըթ, էյ աուլմանտա օլան բէտէրիմիզ, գապահաթլարընըզ աթվ էյլէ պիլէ» տէսինլէր, ֆագաթ քէնտի հիշ պիր վագըթ պէօյլէ տուա էթմէզ, Նիհայէթ պի-ղիմ կիպի ատէմ օլտուղը, սայիր ինսանլար կիպի չալըշտըղը, եալատըղը, իզթիրապ չէք-տիյի վէ պիր ատէմ կիպի էօլտիւյիւ հալտէ, թէճրիպլէրէ մարուզ գալտըղը, կիւնահ իլէ գուլատըլմը օլտուղը, կիւնահ հագընտա էն պէօյիւք պիր նէֆրէթ հիսս էթտիյի, պիւ-թիւն ինսանլարըն սէլամէթի արգուսըյա եանրպ թուլուշտըղը հալտէ, հիշ պիր վա-գըթ վէ հիշ պիր թարաֆտա պիղզաթ քէն-տի սէլամէթիլէ մէշղուլ կէօրիւլմէզտի: Օ, պիքիր, շահպէսիզ, վէ սաքին վէ միւնշէ-րիհ պիր վիճտանա մալիք իտի քի օրատա հիշ պիր թէէսսիւֆ, հիշ պիր իզթիրապ, հիշ պիր գօրգու պուլունմագտը: Սատըրընտան սատըր օլան թէմիզ նէֆէսի, նագարընըն թարիֆ գապուլ էյլէմէզ օլան րարլաղըղը, բուհընըն ալլահանի սիւքունէթի, տուրմագ-սըզըն «աղիզ, աղիզ, աղիզ, պիսուշ, կիւ-նահքեարլարտան այրըլմը» շէհատէթինի վէ-րիրլէր:

(Մապաւի վար)

ՕՐՄԱՆԵԱՆԻ ՄԻՋԱԴԵՊԻՆ ԱՌԹԻԻ

(Շար. եւ վերջ)

«Տո՛ւր պատասխանի անգգամին՝
լուս անգգամութեան խումբ,
«Յանդիմանիս՝ զանիսն, եւ
յաւելցի անց զինք»:

Մեր մինչեւ հիմա ըսածներէն կրնան ըն-թերցողներն կուսնել առանց դժուարութեան թէ, էջմիածնական Հայոց քարոզած և իրենց վերագրած ազատախոհութիւնն և ազատա-մտութիւնն յի՞նչ կը կայանայ: Իրենց ուզած ազատութիւնն, օրինաց ներած սահմանին մէջ խորհելու, խօսելու և գործելու ազա-տութիւնը չէ. այլ անկէ դուրս, անսանձ, ապերասան, անկարգ ազատամտութիւն մը,

որ ստուգիւ թէ՛ Սուրբ Կրօնից և թէ՛ ուրիշներու ազատութեան դէմ բռնաբարում և եղեռն մի է, ուստի իրենց անկարգ տեսակէտով Կաթողիկ Կղերն յետամնաց, խաւարեալ և կրօնամոլ է, անոր համար որ իւր կրօնքը, իւր հաւատքը, իւր խիղճը իրենց քմահաճոյքին չի զոհեր: Եւ ինչպէս կրնայ զոհել այնպիսի մարդկանց, որոնք կրօնական նկարագիր և սկզբունք չունին, որոնց համար «ամէնը մէկ է» (բայի Կաթողիկէութենէ), և որոնց նուիրագործեալ ազգային նշանաբանն է, «Ասանկ ալ կ'ըլլայ, անանկ ալ կ'ըլլայ»: Աստուած մի կայ, կամ չկայ: Երեք անձինք կան, կամ չկան: Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդին է, կամ չէ: Երկու բնութիւն ունի, կամ չունի: Եկեղեցիներուն մէջ մէկ հատը միայն կրնայ ճշմարիտ ըլլալ, կամ չըլլալ. եւն., եւն., եւն.: Իրենց համար ասոնց ամէնն ալ, եւ ուրիշ շատ մը հակասական և հակառակ բաներ, միեւնոյն բանն են: Ինչ անուն տալ այսպիսի կրօնքի մը և եկեղեցւոյ մը, և ինչպէս հնար է քրիստոնէի մը, հաւատացեալի մը, առանց իւր հաւատքը, իւր խիղճը զոհելու, միաբանել այդպիսեաց հետ, «զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի»: Երեւակայեցէ՛ք անձ մը, որ միեւնոյն ժամանակ անսահման միահեծան միապետութեան, այսինքն բռնաւորութեան, սահմանադրական միապետութեան, ազնուապետական կառավարութեան, ռամկավարական հասարակապետութեան, անիշխանական վարչութեան եւլն. եւլն. կուսակից է, այդ անձըն որպիսի նկարգրի տէր, և ո՞րչափ անարժան մարդ ըլլալու է: Հաւատքի և կրօնից տեսակէտով այսպէս անտարբեր եղող մարդը կամ եկեղեցին, որ իբր անկախ և ազատախօհ պարծենալու լրբութիւնն ալ ունի, շատ աւելի ցած, ստորին եւ անարդ է, և մարդու եւ եկեղեցւոյ անուան ամենեւին անարժան: Այսպէս են էջմիարձականներն ալ: Եւ արդարեւ ասոնց համար կրօնքներու մէջ (ի բաց առեալ Կաթողիկէութիւնը), ամենեւին տարբերութիւն չկայ, և պէտք չէ որ ըլլայ: Իրենք անխտիր կը պատարագեն և հոգեհանդիստ կը կատարեն նաև ոչ—քրիստոնէից

համար: Տխրահուչակ Կոմս Թոլսթոյ, «որ Քրիստոսի Տեառն մերոյ Աստուածութիւնը ուրանալուն համար Ռուս եկեղեցիէն բանաբուած էր, եւ այդ պատճառաւ եւս եկեղեցական թաղմանէ զրկուեցաւ, Մոսկուայի Հայոց եկեղեցւոյն մէջ իրեն հոգեհանդիստեան հանդիսաւոր Պատարագն ու Պաշտօնն ունեցաւ! Ինչպէս պատարագողն կրցաւ «Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ, զթա՛ք քո արարչական սիրովդ ի հոգի հանդուցեալ ծառայի քո», (Թոլսթոյ Կոմսի) ազօթքը զրուցել, մարդու մը համար, որ զՔրիստոս կ'ուրանար, իր անապաշխար մեռած էր: Որպիսի՞ կրօնք, որպիսի՞ եկեղեցի և որպիսի՞ խիղճ:

Ե. Օտեան կը պարծենայ թէ, իրենց նախնեաց մտայնութիւնը, այսինքն կրօնամոլութիւնը չունին: Երանի՛ թէ ունենային: Կրօնամոլութիւն կամ մոլեռանդութիւն ունենալու համար հարկ է կրօնք մը ունենալ. այդ ձեռ նախնիքն, թէպէտեւ Կաթողիկէ կրօնից ոխերիմ թշնամիներ, բայց կրօնք մը ունէին, որուն անկեղծաբար կը հաւատային որուն օրինաց և կանոնաց նախանձախնդիր էին, և կը հալածէին Կաթողիկիները «համարելով պաշտօն մատուցանել Աստուծոյ»: Դուք անոնց մեզի հանդէպ ունեցած ատելութիւնը առաւելաւն հանդերձ ունիք: Բայց քանի որ ձեր իսկ խոստովանութեամբ, անոնց մտայնութիւնը, այսինքն հաւատքը չունիք. ո՞րն է ուրեմն ձեր ունեցած հաւատքը: Կրօնքի վրայ խօսելով, բոլոր աշխարհի կողմանէ ընկալեալ ճշմարտութիւն մըն է որ, «կրօնքի մասին անխտրութիւնը, անտարբերութիւնը անկրօնութիւնն է»: Երեւակայեցէ՛ք քօփ մը կտաւ, որչափ ալ ազնիւ ըլլայ, զոր մարդու, արձանի, ձիու, ուղտի, առիւծի և ուրիշ ամէն կենդանեաց վրայ հեռուէն փաթթեն եւ քակեն. այդ կտաւը եւ ոչ միոյն կը պատկանի, այսպէս է կրօնական համոզումն և նկարագիր չունեցող անձն եւ եկեղեցին. «Un homme sans caractère. sans principe» Առանց նկարագրի, առանց սկզբունքի մարդ: Մենք Կաթողիկեայքս ստրուկ չենք, զերի չենք, ինչպիս որ զուր կը բարդ

